# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
# 2009 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
# ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2009

## Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների մասին

Հասարակական վերահսկողություն իրականացնելու և լայն հրապարակայնություն ապահովելու նպատակով սույն հրապարակմամբ ներկայացվում են ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և հանրապետական գործադիր մարմինների ընթացիկ տարվա գերակա խնդիրները: Այն պարունակում է 254 միջոցառում և 119 գերակա խնդիր:

Ծրագրում հստակ նշված են յուրաքանչյուր միջոցառման նպատակը, ակնկալվող արդյունքը, կատարման պատասխանատու մարմինը, ժամկետը և ֆինանսական ապահովման աղբյուրը:

Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմը:

Ծրագիրը տեղադրված է նաև ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.gov.am):

ՀՀ կառավարության աշխատակազմի
տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի վարչություն

Տնտեսական բարեփոխումների
վերլուծական-տեղեկատվական կենտրոն

Ոչ պաշտոնական հրատարակություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*15 հունվարի 2009 թվականի N 40 - Ն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **áñáßáõÙ ¿.**

1. Հաստատել՝

    1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

    2) հանրապետական գործադիր մարմինների 2009 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում սույն որոշման N 1 հավելվածում ներառված միջոցառումների իրականացման ընթացքի, իսկ ընթացիկ տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության ծրագրի կատարման մասին:

3. Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում սույն որոշման N 2 հավելվածում ներառված գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ **Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2009 թ. հունվարի 20
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունվարի 15-ի N 40 - Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսա-կան ապա-հովումը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | | | |
| 1. «Բաց եղանակով պինդ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման տեխնոլոգիական նախագծման նորմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Լեռնահանքային կազմակերպություններին կտրամադրվեն հանքավայրերի շահագործման տեխնոլոգիական նախագծման նորմերը, որոնք կնպաստեն հանքավայրերի արդյունավետ ու համալիր օգտագործման ապահովմանը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 2. «Ստորերկրյա եղանակով պինդ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման տեխնոլոգիական նախագծման նորմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Լեռնահանքային կազմակերպություններին կտրամադրվեն հանքավայրերի շահագործման տեխնոլոգիական նախագծման նորմերը, որոնք կնպաստեն հանքավայրերի արդյունավետ ու համալիր օգտագործման ապահովմանը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 3.«Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների չափսերի սահմանում և այդ գոտիներում կատարվող աշխատանքների կանոնակարգում | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 4.«Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով ընդերքի տեղամասերի տեղագրական քարտեզի կազմման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Վնասակար ու թունավոր թափոնների երկարաժամկետ պահպանման համար հուսալի պահեստարաններ կառուցելու նպատակով խոշորամասշտաբ (1:10000, 1:5000) երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման և համապատասխան բարենպաստ տեղամասերի առանձնացման աշխատանքների իրականացման ծրագիր | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 5. «Ընդերքօգտագործման նախագծերի պետական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Լեռնահանքային կազմակերպությունների կողմից ներկայացվող ընդերքօգտագործման նախագծերի պետական փորձաքննության կարգի սահմանում և այդ գործընթացի հստակեցում՝ նպաստելու համար ընդերքի արդյունավետ օգտագործմանը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 6.«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Էներգետիկ փորձաքննության իրականացման գործուն համակարգի ստեղծման նպատակով դրանք իրականացնող կազմակերպությունների կարգավիճակի հստակեցում | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 7.«Ընդերքի ոլորտի և ընդերքօգտագործման կարգավորման օրենսդրության համալիր վերանայման հայեցակարգի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Ընդերքի ոլորտում գործող օրենսդրության համալիր վերանայում՝ միջազգային նորմերին համապատասխանեցնելու, ազատականացման սկզբունքները ներառելու և ներկայիս շուկայական հարաբերությունների հետ համաձայնեցնելու նպատակով | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |
| 8.«Վրաստան-Հայաստան 400կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող մասի ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության գործունեության ծրագրի կատարման ապահովում | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 9.«Հայաստանի Հանրապետության ընդերքի ոլորտի ազգային քաղաքականությունը և զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Ընդերքի համալիր ու ողջամիտ օգտագործմանն ուղղված քաղաքականության ու ռազմավարության մշակում՝ ընդերքի ու շրջակա միջավայրի հիմնախնդիրների հաշվառմամբ | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 10. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը | Էներգետիկ փորձաքննության իրականացման գործընթացի համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| **ՀՀ քաղաքաշինության նախարարություն** | | | | |
| 11.«Հայաստանի Հանրապետության 2009 թ.պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկա-ցումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և 1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց աջակցության տրամադրման հետ կապված քայլերի հստակեցում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 12.«Կրթական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման համալիր ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կրթական և մշակութային օբյեկտների կառուցմանն ու հիմնանորոգմանն ուղղված պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում ընդգրկվող օբյեկտների ցանկի հստակեցման միջոցով ՀՀ 2010-2012 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի ձևավորման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 13.«ՀՀ պետական քաղաքաշինական կադաստրի ներդրման և վարման պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Քաղաքաշինական ոլորտի տեղեկատվական բազայի ստեղծում և տեղեկատվության ապահովում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 14.«ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքային հատակագծման նախագիծը հաստատելու մասին (Ջերմուկի նոր օդանավակայանի տարածքի ընտրության ներառումով)» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տարածքային զարգացման քաղաքաշինական ծրագրերի իրագործման արդյունավետության և ամբողջականության ապահովում, համայնքների ընդհանրական շահերին առնչվող խնդիրների (ինժեներատրանսպորտային, կոմունալ ենթակառուցվածքներ և այլն) փոխկապակցված լուծումների ամրագրում, բնակավայրերի բազմակենտրոն տարածական ցանցի զարգացման նախադրյալների ստեղծում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| --- | --- | --- | --- | --- |
| 15.«Գյումրի քաղաքի Անի և Մուշ-2 թաղամասերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար առնվազն 2300 բնակարանների և սպասարկման օբյեկտների կառուցման նպատակով հողահատկացումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անհրաժեշտ նախապայման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման, փորձաքննության կազմակերպման համար | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 16.«ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար առնվազն 182 բնակարանների և սպասարկման օբյեկտների կառուցման նպատակով հողահատկացումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անհրաժեշտ նախապայման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման, փորձաքննության կազմակերպման համար | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 17.«ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար առնվազն 354 բնակարանների և սպասարկման օբյեկտների (անհատական, բլոկացված և բազմաբնակարան բնակելի տներով կառուցապատմամբ և արհեստագործների թաղամասի ստեղծումով) կառուցման նպատակով հողահատկացումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անհրաժեշտ նախապայման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման, փորձաքննության կազմակերպման համար | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** | | | | |
| 18.«Ռիսկերի գնահատման տեղեկատվական համակարգերի ներդրման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գործող ռիսկերի գնահատման տեղեկատվական համակարգի ստեղծման առկա ծրագիր, որի իրագործումը թույլ կտա հաշվառել, գնահատել, կառավարել հանրապետությունում առկա տարերային և տեխնածին ռիսկերն ու նպատակային օգտագործել պետբյուջեով հատկացված միջոցները | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 19.«Կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ու կապի ժամանակակից համակարգեր հիմնելու և ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գործող ազդարարման ու կապի ժամանակակից համակարգերի ներդրումը, կառավարման մարմինների ուսուցումն ապահովող ծրագրի առկայություն | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 20.«Տարաբնույթ տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման ժամանակակից գործուն համակարգի ձևավորման, ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընդունված ծրագիր, որի իրագործումը կապահովի տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման գործուն համակարգի ձևավորմանը | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 21.«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում իրազեկման ժամանակակից համակարգի ստեղծման ու զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Առկա ծրագիր, որի իրագործումը կապահովի իրազեկման ժամանակակից համակարգի ստեղծումը և տեղեկատվական դպրոցի հիմնումը | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 22.«Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համակարգի բարեփոխման, սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման, իրազեկման համակարգի արդիականացման, արդիական գիտական հայտնագործությունների ներդրման ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սեյսմաչափության, երկրաբանության, երկրաֆիզիկայի, համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում վերջին նվաճումներով զինված սեյսմիկ մոնիթորինգի անցկացում, Հայաստանի վերաբերյալ տվյալների հավաքման և մշակման կենտրոնի կատարելագործում և տարածքային սեյսմոլոգիական, երկրաբանական, երկրաֆիզիկական տվյալների արագ փոխանակում Հայաստանի և արտասահմանի միջև | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 23.«Հիդրոօդերևութաբանական ուսումնասիրությունների մոնիթորինգի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության եռամիասնական համալիրի ձևավորման և պարբերական արդիականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված Հիդրոօդերևութաբանական ուսումնասիրությունների մոնիթորինգի համակարգի վերազինման ծրագիր | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 24.«Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում «Արտակարգ իրավիճակների տեսչության ձևավորման (Պետական հրդեհային տեսչության հիմքի վրա) ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տեսչության ստեղծումով ապահովվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գործող բոլոր կառույցների արդյունավետ աշխատանքը և ՀՀ օրենքների, ինչպես նաև նորմատիվ ակտերի կատարումը հակահրդեհային, սեյսմիկ, տեխնիկական անվտանգության ոլորտներում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 25.«Տեխնիկական անվտանգության ծառայության օրենսդրական մեթոդաբանական և տեխնիկա-տեխնոլոգիական բազայի արդիականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կենտրոնի և մասնաճյուղերի տեխնիկական բազայի վերազինում և համալրում, տեխանվտանգության ապահովման ոլորտում միջազգային համագործակցության խորացում և ինտեգրում, գործող միջազգային կառույցների փորձի փոխանակում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 26.«Հատուկ փրկարարական, հատուկ հրշեջ, հրշեջ փրկարարական, ջրափրկարարական և այլ ուժերի վերազինման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Առկա ծրագիր, որի իրագործումը թույլ կտա ունենալ նորագույն հատուկ տեխնիկայով, սարքավորումներով, հանդերձանքով ու այլ միջոցներով վերազինված հատուկ փրկարարական, հատուկ հրշեջ, հրշեջ փրկարարական, ջրափրկարարական և այլ ջոկատներ, ինչպես նաև ամբողջապես ուսուցանված փրկարարական, հրշեջ-փրկարարական անձնակազմ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 27.«Մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի ստեղծման (եվրոպական 112 համակարգի օրինակով) ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակված և շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցված ծրագիր՝ ստեղծելով համապետական տեղեկատվական համակարգ, ինչը կնպաստի հետագա գործառույթների անխափան կատարմանը, որի արդյունքում հանրապետության բնակչությունն արտակարգ իրավիճակներում և ամենօրյա ահազանգերի դեպքում կունենա առավել օպերատիվ արձագանքում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 28.«Աղետների և պատերազմական իրավիճակի արդյունքում վնասված և ոչնչացված ենթակառուցվածքների առաջնային վերականգնողական հանրային աշխատանքների իրականացման, ինչպես նաև այդ աշխատանքներում տուժած բնակավայրերի բնակիչների ներգրավման, համակարգի ձևավորման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծրագիրը և դրանից բխող իրավական ակտերը կնպաստեն առաջնային վերականգնողական հանրային աշխատանքների համակարգի ձևավորմանը, ինչպես նաև տուժած բնակավայրերի բնակիչներին վերականգնողական աշխատանքներում ներգրավման մեխանիզմները | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 29.«Աղետների հետևանքների առաջնային վերացման և ապահովագրության համակարգերի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Աղետների դեմ պայքարի և դրանց հետևանքների վերացման ու բնակչությանը և տարածքներին պատճառված վնասների փոխհատուցման գործուն համակարգի ստեղծում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 30.«Պետական ռեզերվների ընդլայնման, պահպանման ենթակառուցվածքների բարելավման, համակարգի բարեփոխումների և արդիականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երկրի պարենային և տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 31.«Արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման մեխանիզմների հետազոտման, փրկարարական աշխատանքների իրականացման մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվայնացման տարածաշրջանային կենտրոնի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Առկա ծրագիր, որը կապահովի ՀՀ-ում արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման մեխանիզմների հետազոտման, փրկարարական աշխատանքների իրականացման մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվայնացման տարածաշրջանային կենտրոնի, ինչպես նաև աղետների բժշկության կենտրոնի ստեղծում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 32.«Ջրածնի էլեկտրոլիզի մեթոդով ջրածնի արտադրության ժամանակ անվտանգության կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոլորտային արտադրություններում տեխնիկական անվտանգության ապահովման համար ենթաօրենսդրական դաշտի ձևավորում, համապատասխան պահանջների ամրագրում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 33.«Օգտակար հանածոների ջարդման, հարստացման, տեսակավորման և հանքաքարի ու խտանյութի կտորավորման անվտանգության կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոլորտային արտադրություններում տեխնիկական անվտանգության ապահովման համար ենթաօրենսդրական դաշտի ձևավորում, համապատասխան պահանջների ամրագրում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 34.«Եռակցողների և եռակցման արտադրության մասնագետների ատեստավորման տեխնոլոգիական կանոնակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոլորտային արտադրություններում տեխնիկական անվտանգության ապահովման համար ենթաօրենսդրական դաշտի ձևավորում, համապատասխան պահանջների ամրագրում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 35.«Ատրակցիոնների կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգի մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոլորտային արտադրություններում տեխնիկական անվտանգության ապահովման համար ենթաօրենսդրական դաշտի ձևավորում, համապատասխան պահանջների ամրագրում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 36.«Ամբարձիչ աշտարակների կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոլորտային արտադրություններում տեխնիկական անվտանգության ապահովման համար ենթաօրենսդրական դաշտի ձևավորում, համապատասխան պահանջների ամրագրում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 37.«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի մի շարք հասկացությունների և դրույթների հստակեցում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. հունվարի 2-րդ տասնօրյակ | |
| 38.«ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի N 392 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ծրագրի «Իրավական ակտերի մասին» և «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքներին համապատասխանեցում, ծրագրի մի շարք հասկացությունների և դրույթների հստակեցում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 39.«Սեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների իրականացում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 40.«Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սեյսմիկ պաշտպանության ոլորտի աշխատանքների բարելավում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 41.«Երևան քաղաքում հնարավոր ուժեղ երկրաշարժի վաղ ազդարարման համակարգի ներդնում ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հնարավոր ուժեղ երկրաշարժից արդյունավետ պաշտպանություն և բնակչության օպերատիվ տարհանում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 42.«Երևան քաղաքի շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատում» ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնակավայրերի սեյսմիկ ռիսկի քարտեզների մշակում և ստեղծում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 43.«Երևան քաղաքի դպրոցներում, հիվանդանոցներում և այլ բուժհիմնարկներում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ուժեղ երկրաշարժի վերաբերյալ գործողությունների և վարքականոնների ուսուցման ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնակչության տեղեկացվածության բարձրացում երկրաշարժից պաշտպանվելու ուղղությամբ | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ՀՀ մշակույթի նախարարություն | | | | |
| 44.«Հուշարձանների կադաստրի կազմման և ներդրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառին վերաբերող ամբողջական տեղեկատվության հավաքագրման աշխատանքների կանոնակարգում: Համակարգչային ծրագրերի ներդրմամբ` տեղեկատվական բանկի ստեղծում: Հայաստանի Հանրապետության պետական միասնական կադաստրային համակարգի համալրում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 45.«Հնագիտական պեղումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնագավառի իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և պարտավորությունների սահմանում, հնագիտական ժառանգության ուսումնասիրության և պեղումների իրականացման իրավական հիմքերի ստեղծում` կանխարգելիչ-պահպանական հնագիտության հիմնադրույթների սահմանման միջոցով, հնագիտական հետախուզումների ու պեղումների ընթացքում իրավահարաբերությունների կանոնակարգում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 46.«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Օրենսդրական դաշտի կատարելագործում, միջազգային կոնվենցիաներին համապատասխանեցում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 47.«Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման համալիր ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման (այդ թվում` նաև արտերկրում) արդյունավետ համակարգի ձևավորում, մշակութային ծառայությունների որակի բարձրացում, կադրերի արդյունավետ և հավասարաչափ տեղաբաշխման պայմանների ստեղծում, մշակույթի ոլորտի կադրային պահանջարկի ապահովում | ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 48.«Պետական խորհրդանիշների հանրահռչակման և քաղաքացիական դաստիարակության ազգային ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական խորհրդանիշների ճանաչելիության ապահովում հասարակության մեջ, հայրենասիրական և քաղաքացիական դաստիարակությանը նպաստում | ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 49.«Մշակութային շարժական ժառանգության տեղեկատվական շտեմարանի ստեղծման, համալրման և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակույթի ոլորտում տեղեկատվա- կան նոր տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ՀՀ մշակութային արժեքների պահպանական ցուցակի ստեղծում, համալրում և հանրության համար այդ տեղեկույթի մատչելիության ու հասանելիության ապահովում, ինչպես նաև դրանց նկատմամբ ապօրինի փոխանցումների կանխարգելում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | |
| 50.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բուսասանիտարական փորձա- քննության նպատակով բույսերից, բուսական արտադրանքից և կարգավորվող առարկաներից նմուշառման գործընթացի վրա ծախսվող ժամանակի նվազում՝ շուրջ 30 տոկոսով, որի հետևանքով կպակասի նաև բեռների հարկադիր կանգառը, շուրջ 50 տոկոսով կնվազի լաբորատոր փորձաքննության նպատակով ներկայացվող նմուշների քանակը, ինչպես նաև նմուշառման կարգը կհամապատասխանեցվի «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և բուսասանիտարական միջոցառումների չափորոշիչների դրույթներին | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 51.«Գյուղատնտեսական վարչական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սահմանել գյուղատնտեսական վարչական ռեգիստրի ձևավորման սկզբունքներն ու կառուցակարգերը, ռեգիստրի միջոցով հստակեցնել ոլորտի տնտեսավարող սուբյեկտների հաշվառումը և վիճակագրական տվյալների հավաքագրումը | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 52.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անտառակառավարման պլանների մշակման գործընթացում առաջացած խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ապահովում անտառներում սանիտարական հատումների կանոնակարգում ապօրինի անտառահատումների շուրջ 40.0 տոկոսով կրճատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| --- | --- | --- | --- | --- |
| 53.«Բույսերի նոր սորտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Օրենքի ընդունմամբ կկարգավորվի բույսերի նոր սորտերի պահպանությունը` «Բույսերի նոր սորտերի պահպանության միության» (ՈՒՊՕՎ ) պահանջներին համապատասխան, ՀՀ Ազգային ժողովը 2003թ. հոկտեմբերի 22-ի N Ն-039-3 որոշմամբ վավերացրել է բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային կոնվենցիան, որով պահանջվում է ընդունել առանձին օրենք «Բույսերի նոր սորտերի մասին», արդյունքում` սելեկցիոներների իրավունքների պաշտպանության համար իրավական երաշխիքների ստեղծում, կոնվենցիայում ընդգրկված են միայն բույսերի նոր սորտերը, կենդանիների ցեղերը դուրս են կոնվենցիայի կարգավորման դաշտից, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարելու «Սելեկցիոն նվաճումների մասին» ՀՀ օրենքում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| --- | --- | --- | --- | --- |
| 54.«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ անտառային օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան անտառային տարածքների վարձակալական հարաբերությունների կանոնակարգում, պետական սեփականության անտառների գոտևորմանը համապատասխան վարձավճարի սահմանում, որով կկանոնակարգվի անտառային հողերի վարձակալության գործընթացը | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 55.«Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի կիրառման արդյունքում ի հայտ եկած օրենսդրական բացերի վերացում, առանձին գերատեսչությունների և կառույցների իրավասությունների և գործառույթների հստակեցում, որը կապահովի անտառների կայուն կառավարումը | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 56.«Հացին և հացաբուլկեղենին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետությունում հացի և հացաբուլկեղենի արտադրության և շրջանառության փուլերում տնտեսավարող սուբյեկտների գործառույթների կանոնակարգում, սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների բացառում և արտադրանքի առնվազն 95 տոկոսը՝ գործող ստանդարտներին համապատասխանեցում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 57.«Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման ծառայության զարգացմանն աջակցության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկում իրականացնող կառույցների ձևավորման մեխանիզմների մշակում հայեցակարգի հիման վրա նպատակային ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքի մշակում և ծրագրի իրականացման ֆինանսական աղբյուրների առաջարկի հստակեցում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2009 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| --- | --- | --- | --- | --- |
| 58.«2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց մեկ հեկտար հողատարածության հաշվով պետական աջակցության գումարի չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական աջակցությունը կընդգրկի բոլոր մարզերի (բացառությամբ Արարատի և Արմավիրի) սահմանամերձ համայնքների գարնանացան և աշնանացան ցորենի, բարձրլեռնային համայնքների համար նաև գարու 0.5-7.0 հա ցանքատարածությունները (ընդամենը 167 համայնք), գյուղատնտեսության համար անբարենպաստ պայմաններում գտնվող համայնքները՝ Արագածոտնի մարզի Արագածի, Գեղարքունիքի մարզի Ճամբարակի և Մարտունու, Շիրակի մարզի Ամասիայի և Աշոցքի, Սյունիքի մարզի Մեղրու, Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանների համայնքների աշնանացան ու գարնանացան ցորենի և գարու 0.5-7.0 հա ցանքատարածությունները (ընդամենը՝ 128 համայնք), ծրագիրը կներառի նաև հանրապետության բոլոր համայնքների հատիկի եգիպտացորենի 0.3-7.0 հա ցանքատարածությունները, յուրաքանչյուր հա ցանքատարածության համար կտրամադրվի 45.0 հազ. դրամ, ծրագիրը կներառի շուրջ 65.0 հազ. հա ցանքատարածություն՝ 30-35 հազ. շահառու: Ակնկալվում է ցանքատարածությունների 12 և համախառն բերքի 15.0 %-ով ավելացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 2009 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 59.«Սննդամթերքի միջազգային չափորոշիչներին բավարարող լաբորատորիաների ստեղծման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անվտանգ սննդամթերքի արտադրության ապահովում, անվտանգ սննդամթերքի ապահովման նպատակով սննդամթերքի անվտանգության 2500 փորձաքննության ապահովում, մեկ ռեֆերենտ և 5 մարզային (Սյունիքի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի) սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների վերազինում միջազգային չափանիշներին համապատասխան | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Միջազգա-յին կազմա-կերպու-թյունների աջակցու-թյուն և ՀՀ գյուղա-տնտեսու-թյան նախարա-րության գյուղական ձեռնար-կություն-ների և փոքրա-ծավալ առևտրային գյուղա-տնտեսու-թյան զար-գացման վարկային ծրագրի միջոցներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | | | | |
| 60.«Պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրի «ֆինանսատնտեսական և առևտրային բնույթի գործողու-թյունների խումբ» բաժնի 30-րդ կետի համաձայն՝ պետական ֆինանսական վերահսկողության համակարգի բարելավումների իրականացման նպատակով պետա-կան ներքին ֆինանսական հսկողու-թյան ռազմավարության մշակում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 61.«ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում հին (ծրագրային բյուջետավորման ձևաչափին չհամապատասխանող) ձևաչափով նախատեսված ծախ-սային ծրագրերը ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափը սահմանելու մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հին ձևաչափով նախատեսված ծախսային ծրագրերի սահմանում ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 62.«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտի նախագծի առկայություն | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 63.«Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նախադրյալների ստեղծում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| ՀՀ բնապահպանության նախարարություն | | | | |
| 64.«Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի հաշվառման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բուսական աշխարհի օբյեկտների հաշվառման համակարգի բարելավում և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և կայուն օգտագործման համար տեղեկատվական հենքի ստեղծում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 65.«Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգի հզորությունների ամրապնդման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավար-ման ապահովման համար, առկա խնդիրների լուծման՝նյութատեխնի-կական հենքի բարելավման, կառավարման մեթոդաբանության ներդրման, տեղեկատվական ցանցի ներդրման, պահպանու-թյունն իրականացնող աշխատակիցների մասնագի-տական գիտելիքների և հմտությունների կատարելագործ-ման և բնության հատուկ պահպան-վող տարածքների համակարգի բարելավմանն անհրաժեշտ այլ նախադրյալների ստեղծում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 66.«Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի հաշվառման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառման համակարգի բարելավում և կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության և կայուն օգտագործման համար տեղեկատվական հենքի ստեղծում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 67.«Հայաստանի Հանրապետության բնապահպանական տեսչական համակարգի հզորությունների ամրապնդման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ տեսչական համակարգի ուժեղացման և վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով առկա խնդիրների լուծման՝ նյութատեխնիկական հենքի բարելավման, տեսչական աշխատանքների իրականացման մեթոդաբանության (ուղեցույցի) ներդրման, տեղեկատվական ցանցի ներդրման, տեսուչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման և տեսչական համակարգի բարելավմանն անհրաժեշտ այլ նախադրյալների ստեղծում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 68.«Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցմանն ու կանխմանն ուղղված միջոցառումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պահանջվող որակի և անհրաժեշտ քանակի ջրով ապահովման, ջրօգտագործողների կողմից արտադրական կեղտաջրերի նախնական մաքրում իրականաց-նելու մեխանիզմների ստեղծման և ջրային էկոհամակարգերի պահպանման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ համապատասխան միջոցառումնե-րի ամրագրմամբ, հետագայում նաև դրանց իրագործմամբ՝ ՀՀ ջրային ռեսուրսների աղտոտվածության նվազեցում, ջրի որակական և քանակական ցուցանիշների բարելավում, ջրերի կորուստների և կառավարման բնագավառում ռիսկայնության նվազեցում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2009 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 69.«Ըստ դասակարգման՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ըստ միջազգային, հանրապետա-կան և տեղական նշանակության սնման աղբյուրների, գետերի երկարության, լճերի ծավալի, ջրայնության աստիճանի, հոսքի տարեկան բաշխման, օգտագործ-ման նշանակության և որակի դասակարգմամբ ջրային ռեսուրս-ների օգտագործման և պահպա-նության պահանջների սահման-մամբ՝ Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման բարե-լավում և շրջակա միջավայրի էկոլո-գիական կայունության ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 70.«Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման անբավարար մակարդակը հասարակության մեջ պատմականորեն ձևավորել է բնությունը նվաճելու և նրա ռեսուրսներն անխնա օգտագործելու գերիշխող հոգեբանություն: Դրա հետևանքները վերացնելու նպատակով համապատասխան միջոցառումների ամրագրմամբ, ինչպես նաև հետագայում դրանց իրականացմամբ կապահովվի բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ազգային համակարգի բարելավումը | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | | | | |
| 71.«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում գնդակապարկուճային հաշվառման քարտադարանի կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Դատական ծգաբանության միջոցներով և մեթոդներով ՀՀ զինված ուժերում կատարված հանցագործությունների բացահայտման քրեատեխնիկական ապահովման և ծգաբանական փորձաքննության գործընթացի բարելավում | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2009 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 72.«Ռազմատրանսպորտային պարտականության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում | Զորահավաքային նախապատրաստության շրջանակներում զինված ուժերը խաղաղ և պատերազմական ժամանակաշրջանում տրանսպորտային միջոցներով ապահովելու հարաբերությունների կարգավորում | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2009 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 73.«Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրա-պետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում | Զինծառայողների պաշտոնի նշանակման, առաջխաղացման գործընթացի թափանցիկության ապահովման համապատասխան մեխանիզմների հստակեցում | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2009 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 74.«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում | Պահեստազորային պայմանագրային ծառայության, առողջական վիճակի պատճառով տրվող տարկետումների վերաբերյալ դրույթների բարելավում | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2009 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 75.«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում | Զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց, զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալական ապահովության խնդիրների բարելավում | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2009 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | | | | |
| 76.«Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | Երիտասարդների և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծում, 2010 թվականից սկսած՝ տարեկան շուրջ 100 երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2009 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 77.«Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերում սպորտի և երիտասարդության հարցերի կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | Հայաստանի Հանրապետության մարզերում սպորտի և երիտասարդության հարցերի պետական քաղաքականության ներդրման գործընթացների բարելավում, համայնքներում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացում | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2009 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| 78.«Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման հարցերի կազմակերպման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | Մարզիչ մանկավարժների վերապատրաստման իրականացում. Ներկայումս մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատում է 1814 մարզիչ: Վերապատրաստման ծրագրով նախատեսվում է տարեկան 210 մարզիչ-մանկավարժի վերապատրաստում: 1991 թվականից մինչև օրս չի անցկացվել մարզիչ-մանկավարժների վերապատրաստման և ոչ մի դասընթաց | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2009 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 79.«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափի և հավելավճարների չափի վճարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | Հայաստանի Հանրապետության մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի սոցիալական հիմնախնդրի լուծում | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2009 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | | | |
| 80. ԳԱՂՏՆԻ - | | | | |
| 81.«Կայուն զարգացման ծրագրի իրականացումն ապահովող 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կայուն զարգացման ծրագիրն ապահովող միջոցառումների ամրագրում ըստ ժամկետների, ակնկալվող արդյունքների, պատասխանատուների և ֆինանսական աղբյուրների | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | |
| 82.«Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2009 թ.ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գյումրիում ՏՏ ոլորտի զարգացման նախադրյալների ձևավորում, ՏՏ լուծումների կիրառության խթանում Գյումրիում՝ հետագայում նաև Շիրակի մարզում զարգացման նախադրյալներ ունեցող այլ ոլորտներում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 83.«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության 2009 թ.ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՏՏ ոլորտի առկա հնարավորությունների ներկայացում և առաջմղում ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում, ինչպես նաև ոլորտի թռիչքային զարգացումը և միջազգային շուկաներում դիրքավորումը խթանող բարենպաստ պայմանների ձևավորում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 84.«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանում օտարերկրացիներին տրվող աշխատանքի թույլտվության ժամկետների երկարաձգում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 85.«Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգի ապահովման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սպառողների իրավունքների պաշտպանությանն իրավական դաշտի կատարելագործման, անվտանգության ապահովման գործուն մեխանիզմների ներդնում, սպառողների շահերի պաշտպանության պետական վերահսկողության կատարելագործված համակարգի առկայության ապահովում, այդ թվում՝ կորպորատիվ հսկողության համակարգի ներդնում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 86.«Հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանքային ջրերի նկատմամբ սպառողների վստահության ամրապնդում, ինչպես նաև արտադրանքի մրցունակության բարձրացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 87.«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պաշտպանության նպատակով ոլորտի օրենսդրության կատարելագործում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 88.«Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պաշտպանության նպատակով ոլորտի օրենսդրության կատարելագործում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 89.«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների հստակեցում և մոտարկում Եվրամիության չափանիշներին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 90.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունիսի 26-ի N 775-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի վերանայում՝ հաշվի առնելով իրականացվող միջոցառումների ընթացքը, ժամկետները, նոր միջոցառումներ ընդգրկելու անհրաժեշտությունը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 91.«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի առավելագույն համապատասխանեցում միջազգային ուղեցույցներով սահմանված նմանատիպ համակարգերի պահանջներին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 92.«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հավատարմագրման գործընթացի համապատասխանեցում եվրոպական և միջազգային պահանջներին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 93.«Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համապատասխանության հավաստման ձևերի պարզեցման և թափանցիկության ապահովմամբ, միջազգային գործելակերպում ընդունված նորմերին ներդաշնակեցմամբ համապատասխանության հավաստման արդյունքների փոխճանաչման և միակողմ ճանաչման ապահովում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 94.«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ստանդարտացման բնագավառում օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի համապատասխանեցում միջազգային նմանատիպ համակարգերին, արտաքին առևտրում և ներդրումների ներգրավման գործընթացում խոչընդոտների վերացում, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | 34.Միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի, մրցունակության բարձրացում, զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորում, ներկայացում և ամրապնդում | - Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի 2009 թվականի միջոցառումների իրականացում<br>- Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրից բխող միջոցառումների իրականացում<br>- ՀՀ կառավարության 2005 թ. հունիսի 9-ի N 948-Ն որոշմամբ հաստատված «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագրի իրականացում<br>- Նոր, մրցունակ զբոսաշրջային ուղղությունների ձևավորում, Հայաստանում զբոսաշրջային սեզոնի երկարաձգում<br>- Ձմեռային և առողջարանային զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 35.Հայաստանի՝ որպես գործարարական գործունեության իրականացման համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորում և ամրապնդում | - «Գործարար միջավայրի «գերազանցության կենտրոն» համազգային նախագծի հայեցակարգի իրականացում<br>- «Գործարարությամբ զբաղվելը Հայաստանում» բարեփոխումների հուշագրի հիման վրա կազմված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի իրականացման մոնիթորինգ<br>- Օտարերկրյա շուկաներ հայկական ապրանքների մուտքի համար առավել բարենպաստ պայմանների ապահովում՝ իրավապայմանագրային դաշտի կատարելագործման միջոցով<br>- Ստանդարտացման համակարգի համապատասխանեցում միջազգային չափանիշներին, միջազգային ԻՍՕ և եվրոպական ԵՆ ստանդարտների ուղղակի կիրառում ՀՀ-ում<br>- Պետություն-մասնավոր հատված համագործակցության շարունակական իրականացում |
| ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 36.Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում | - «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման աշխատանքների իրականացում<br>- Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության և գազատուրբինային տեղակայանքով համակցման աշխատանքների իրականացում<br>- Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների իրականացման նպատակով վարկային համաձայնագրի ստորագրում<br>- «Գյումրի 2» ենթակայանի վերազինման աշխատանքների կատարման նպատակով վարկային համաձայնագրի ստորագրում և գլխավոր կապալառուի ընտրություն |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 37.Տարածաշրջանային ինտեգրացում և էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում | - Իրան-Հայաստան գազամուղի շինարարական աշխատանք-ների ավարտ<br>- Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում<br>- Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում<br>- SCADA կապի համակարգի ներդրման աշխատանքների իրականացում<br>- 110 կՎ լարման ենթակայանների վերազինման աշխատանքների իրականացում |
| | 38.Հայկական ԱԷԿ-ի անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում | - Երկրորդ էներգաբլոկի ՊՆՎ-2009 թ. ընթացքում անվտանգության մակարդակի բարձրացման Ցանկով նախատեսված միջոցառումների իրականացում |
| | 39.Ատոմային էներգետիկայի զարգացում | - Հայկական ԱԷԿ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հարցում ներդրողների հետ բանակցությունների վարում |
| | 40.Սեփական վերականգնվող էներգառեսուրսների առաջընթաց յուրացման խթանում | - Մեղրի ՀԷԿ-ի շինարարության մեկնարկ<br>- Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի միջոցներով բիոէթանոլի ստացման, արևային ֆոտովոլտային էլեմենտների տարրերի արտադրության, երկրաջերմային էներգիայի նոր աղբյուրների հետազոտման ուղղություններով հետազոտությունների իրականացում |
| | 41.Ընդերքի պահպանության, վերարտադրության, արդյունավետ և համալիր օգտագործման ապահովում | - Ընդերքօգտագործման մասով օրենսդրական դաշտի կատարելագործում<br>- Ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով Հայաստանի Հանրա-պետության տարածքում ընդերքի տեղամասերի քարտե-զագրման աշխատանքների իրականացում<br>- Երկրաբանական ֆոնդի թվայնացման աշխատանքների իրականացում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն | 42.Գյուղատնտեսության պետական աջակցության հասցեական ապահովում և արդյունավետ կազմակերպում | - «Գյուղատնտեսական տոնավաճառների կազմակերպման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու միջոցով` գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հնարավորությունների ընդլայնում և գնաճի կանոնակարգում<br>- «Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման ծառայության զարգացման աջակցության հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու միջոցով` գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների կանոնակարգում և արդյունավետության բարձրացում<br>- «2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց մեկ հեկտար հողատարածության հաշվով պետական աջակցության կարգը հաստատելու և գումարի չափը սահմանելու միջոցով` ցանքատարածությունների ավելացման, գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման մակարդակի բարձրացման, հողի հարկի հավաքագրման և վարձակալական վճարների գանձման գործընթացի բարելավման, հողի սեփականության իրավունքի և վարձակալման պայմանագրային հարաբերությունների իրավական ձևակերպման, գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն արտադրանքի աճի ապահովում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 43.Անտառային տնտեսության ինստիտուցիոնալ բարեփոխումներ և իրավաօրենսդրական կարգավորում | - Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու միջոցով՝ անտառային հողերի վարձակալության գործընթացի կանոնակարգում<br>- Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով՝ անտառային օրենսգրքի կիրառման արդյունքում ի հայտ եկած օրենսդրական բացերի վերացում, օրենսդրական հիմքերի կատարելագործում, առանձին գերատեսչությունների և կառույցների իրավասությունների ու գործառույթների հստակեցում |
| | 44.Սննդամթերքի անվտանգության համակարգի կատարելագործում | - Հացին և հացաբուլկեղենին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու միջոցով՝ հանրապետությունում հացի և հացաբուլկեղենի արտադրության և շրջանառության փուլերում տնտեսավարող սուբյեկտների գործառույթների կանոնակարգում, սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների բացառում<br>- «Սննդամթերքի միջազգային չափորոշիչներին բավարարող լաբորատորիաների ստեղծման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունելու միջոցով սննդամթերքի որակի և անվտանգության բարձրացման, ինչպես նաև վերահսկողության պայմանների ստեղծում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 45.Երևան քաղաքի ու հարակից մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում՝ մատակարարվող խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում, համապատասխան տարածքների կոյուղացում | - Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի, Ֆրանսիայի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրի, ինչպես նաև «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջոցներով նախատեսված ներդրումային ծրագրերի իրականացման ապահովում<br>- Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավմանն ուղղված նոր վարկային ծրագրի նախապատրաստման գործընթացների մեկնարկ |
| | 46.Հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավում՝ մատակարարվող խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում:<br>Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում | - Ասիական զարգացման բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի (KfW), Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող՝ «Ջրամատակարարման և ջրահեռացման (սեկտորի) ծրագրի», «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագրի, «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» ծրագրի (լրացուցիչ ֆինանսավորում) իրականացման ապահովում<br>- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների նախագծում և շինարարական աշխատանքների իրականացում, ինչպես նաև Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի և կոլեկտորների վերականգնում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 47.Ոռոգման և խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր նախապատրաստված վարկային ծրագրի հաստատման գործընթացների կազմակերպում | - Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված վարկային ծրագիրը Համաշխարհային բանկի քննարկմանը ներկայացում և ծրագիրը գործողության մեջ դնելու գործընթացների ապահովում |
| | 48.Հասցեական սուբսիդավորման հայեցակարգի և փորձնական ծրագրի նախապատրաստմանն աջակցություն | - ՀՀ կառավարության 28.04.2008 N 380-Ա որոշման պահանջների կատարում, տրամադրվող պետական օժանդակության արդյունավետության բարձրացում |
| | 49.Գերնորմատիվային ջրապահանջի խնդրի կարգավորում | - Ժամանակակից արդյունավետ ոռոգման ձևերի ներդնում |
| | 50.Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների կառավարման բարեփոխումների շարունակություն | - «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարման գործում մասնավոր կառավարչի ընդգրկում, կառավարման արդյունավետության բարձրացում: «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության մասնավոր կառավարչի հետ կնքված կառավարման պայմանագրի ժամկետի երկարաձգում: Մասնավոր հատվածի հետ առավել խորը և արդյունավետ համագործակցության ձևերի ներդրման հնարավորությունների ուսումնասիրում<br>- Ոռոգման համակարգերի մասնակցային կառավարման ամրապնդում և ջրօգտագործող ընկերությունների խոշորացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 51. Ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգի ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգի բարելավման հայեցակարգային մոտեցումների մշակում | - Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա մի շարք գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավման համար վարկային ծրագրի նախապատրաստում |
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 52.Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերում անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով | - Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների, որակական և քանակական տվյալների միասնական տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքների իրականացում<br>- Կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ավտոմատացված համակարգի ներդրում<br>- Օգտագործողների համար տվյալների հասանելիության ապահովում |
| | 53.Համայնքների վարչական սահմաններից դուրս պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելը | - Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերին սահմանակից համայնքների նոր սահմանների նկարագրության նախագծերի մշակում<br>- ՀՀ մարզերի և համայնքների վարչական սահմանների նկարագրման աշխատանքների կարգավորման կառավարման հանձնաժողովում քննարկում<br>- «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու նպատակով օրենքի նախագծի մշակում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 54.ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական և կադաստրային քարտեզների տեղափոխումը համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ (WGS-84) | - WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում բաց հրատարակման տեղագրական և կադաստրային քարտեզների ստեղծման նպատակով կոորդինատային համակարգերի վերահաշվարկում<br>- WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում բաց հրատարակման տեղագրական և կադաստրային քարտեզների ստեղծում<br>- WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում բաց հրատարակման քարտեզների հասանելիության ապահովում սպառողների լայն շրջանակների համար |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | 55.Միասնական հարկային օրենսգրքի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շարունակում | - Միասնական հարկային օրենսգրքի անցումային մասի մշակում<br>- Միասնական հարկային օրենսգրքի հավելվածների մշակում<br>- Միասնական հարկային օրենսգրքի նախագծի քննարկում շահագրգիռ գերատեսչությունների և գործարար հանրության շահերը ներկայացնող կառույցների հետ<br>- Միասնական հարկային օրենսգրքի նախագծի լրամշակում` հաշվի առնելով նախագծի վերաբերյալ շահագրգիռ գերատեսչությունների և գործարար հանրության շահերը ներկայացնող կառույցների առաջարկությունները<br>- Միասնական հարկային օրենսգրքի նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը |
| | 56.Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում | - Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների գործընթացում պետական կառավարման մարմինների ընդգրկման շրջանակի ընդլայնում,<br>- Ծրագրային բյուջետավորման ներդրման համար իրավական հիմքերի ստեղծում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| ՀՀ մշակույթի նախարարություն | 57.Մշակութային ժառանգության պահպանություն | - Պատմամշակութային հուշարձանների վերականգնում, դրանց ընդգրկում զբոսաշրջության երթուղիներում և ծրագրերում<br>- Երևան-Գյումրի զբոսաշրջության երթուղում հուշարձանների ընդգրկման պիլոտային ծրագրի մշակում<br>- «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի մասին» ՀՀ կառավարության 2007 թ. մայիսի 3-ի N 17 արձանագրային որոշմամբ նախատեսված 2009 թ. միջոցառումների ծրագրի իրականացում<br>- Արտերկրում գտնվող ազգային մշակութային արժեքների հայտնաբերում և դրանց վերաբերյալ տեղեկույթի հավաքագրում, հաշվառում |
| | 58.Ժամանակակից արվեստի և մշակութային ենթակառուցվածքների զարգացում, մշակութային և ստեղծագործական գործունեության ապահովում | - Պետական աջակցություն թատերարվեստի ոլորտում նոր արտահայտչամիջոցների ձևավորմանը, ժամանակակից դրամատիկական ստեղծագործություններով թատրոնների խաղացանկերի համալրմանը<br>- Պետական աջակցություն երաժշտարվեստի, պարարվեստի ոլորտներում համերգային նոր ծրագրերի, պարային նոր բեմադրությունների ստեղծմանը<br>- Պետական աջակցություն կերպարվեստի ոլորտում սիմպոզիումների, բիենալեների և ցուցահանդեսների կազմակերպմանը՝ ավանդականի և նոր ձևերի համադրման հայտնաբերման նպատակով<br>- Պետական աջակցություն դեբյուտային գործընթացներին. երիտասարդ թատերական և կինոբեմադրիչներին մրցութային սկզբունքով բեմադրությունների և ֆիլմերի պատվիրում, երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների, դիրիժորների և խմբավարների համերգային կատարումների ապահովում<br>- Թատերական, երաժշտական, պարարվեստի և կինոփառատո- |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | | ների, մրցույթների, երիտասարդ կատարողների և ստեղծագործողների ստուգատեսների կազմակերպում |
| | 59.Մշակույթի ոլորտի կադրային քաղաքականություն և մշակութային կրթություն | - Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցում<br>- Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում<br>- Աջակցություն ՀՀ մարզերի շնորհալի երեխաներին ու պատանիներին, ստեղծագործական կարողությունների զարգացման և խթանման նպատակով՝ մեթոդական աշխատանքների իրականացում, վարպետության դասընթացների կազմակերպում<br>- Պետական աջակցություն շնորհալի երեխաների ու պատանիների՝ հանրապետական և միջազգային մրցույթների, փառատոների մասնակցությանը<br>- Ոլորտի աշխատատեղերի և մշակութային ծառայություններ մատուցող մասնագետների շուկայի ուսումնասիրում, կադրերի վերապատրաստման դասընթացների կազմակերպում (այդ թվում նաև արտերկրում), միջազգային կրթական ծրագրերի իրականացում |
| | 60.ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացում, մշակութային կյանքի աշխուժացում, միջմարզային մշակութային համագործակցության խթանում, մշակույթի (դեպի մարզերը) ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովում | - ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման մասին» N 589-Ն որոշմամբ հաստատված ծրագրի և ժամանակացույցի 2009 թ. նախատեսված միջոցառումների իրականացում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | 61.Միջազգային համագործակցության զարգացում | - Արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնում և խորացում. դրանց ներդաշնակ համադրում<br>- Երկկողմ և բազմակողմ համագործակցության փաստաթղթերի նախապատրաստում և ստորագրում, միջազգային կոնվենցիաներին միանալու գործընթացների ապահովում, մշակութային դաշտի նույնականացմանն ուղղված իրավական փաստաթղթերի մշակում<br>- Միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրախորհուրդ, ԱՊՀ, Եվրամիություն, ՍԾՏՀ, ՄԱԿ, ՀՀՄՀ) հետ համագործակցության շրջանակներում համատեղ կամ համաֆինանսավորվող ծրագրերի իրականացում<br>- ՌԴ-ում հայկական մշակութային սեզոնի և ՀՀ-ում Բուլղարիայի մշակութային տարվա անցկացում, արտերկրների մշակույթների ներկայացում Հայաստանում<br>- Արտերկրում հայկական մշակույթի հանրահռչակում, միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում հայ գրքի ներկայության ապահովում` գրահրատարակության 500-ամյակին ընդառաջ<br>- Հայաստանում ԵՄ մշակութային տարածաշրջանային կենտրոնի ձևավորմանն ուղղված նախադրյալների ստեղծում<br>- Հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ սերտ համագործակցությամբ մշակույթի և արվեստի տարբեր ոլորտներում կենտրոնների, դպրոցների, մասնաճյուղերի ստեղծում, մասնավորապես` կինոդպրոց, վերականգնողական կենտրոն<br>- ԵՄ անդամ պետությունների հետ իրավական դաշտի ընդլայնում<br>- ԵՄ ծրագրերի շրջանակներում համատեղ կամ համաֆինանսավորվող նախագծերի իրականացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 62.Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամաս-նությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքնե-րի և էթնիկական ինքնության պաշտպանություն | - Ազգային փոքրամասնությունների լեզուներով ոչ պետական մամուլի և գրականության տպագրում, փառատոների կազմա-կերպում, կրոնական և էթնիկ համայնքների հուշարձանների վերականգնում, ժամանակակից արվեստի զարգացման աջակ-ցության ծրագրերի իրականացում |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | 63.Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում | - Պետական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների կենտրոնացում մեկ վարչարարման վայրում<br>- Նոր քաղաքականության մշակում՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման գծով<br>- Խոշոր հարկ վճարողների կողմից փաստաթղթաշրջա-նառության հարցերի կանոնակարգման շնորհիվ հարկային եկամուտների ապահովում, առաքումների, հասույթի գրանցման գրքերի վարման կանոնների հստակեցում |
| | 64.Հարկ վճարողների շահերի պաշտպանություն և նրանց սպասարկման որակի բարձրացում, հարկման ինքնագնահատման սկզբունքների կիրառման ընդլայնում՝ զուգահեռաբար ներդնելով ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը | - Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում<br>- Հաշվետվություններն էլեկտրոնային տարբերակով հարկային մարմիններ ներկայացնելու համակարգի մշակում, փորձնական կիրառում և ներդրում<br>- Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում, ներառյալ նաև հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացումը<br>- Հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմի էական բարելավում<br>- Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 65.Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության (ներառյալ հետբացթողումային հսկողության) համակարգերի զարգացում և կատարելագործում | - Ռիսկերի կառավարման համակարգում տեղեկատվական բազայի ընդլայնում և զարգացում<br>- Ռիսկերի պրոֆիլների սահմանում և կատարելագործում<br>- Ռիսկերի մոնիթորինգի և վերահսկման համակարգի ձևավորում<br>- Ռիսկերի վերլուծության և գնահատման համակարգի ձևավորում<br>- Հետբացթողումային հսկողության գծով ստուգումների իրականացման և ստուգման ենթակա տնտեսվարողների ընտրողականության միասնական մեթոդաբանության մշակում |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | 66.Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացում | - Պետական գույքի նկատմամբ պետության իրավունքների ձևակերպում (գրանցում )<br>- Պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի սեփականության իրավունքների գրանցում<br>- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից գույքի օգտագործման իրավունքների ձևակերպում<br>- Գույքային իրավունքների հաշվառում պետական գույքի հաշվառման գրանցամատյանում<br>- Անշարժ գույքի (տարածքների) նկատմամբ պետության պահանջների հստակեցում<br>- Այլ երկրներում գտնվող ՀՀ պետական գույքի հաշվառման կազմակերպում և իրականացում |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 67.ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացում | - Պլանավորման ղեկավար փաստաթղթերի մշակում<br>- Ռազմական առաջադրանքների որոշում և սահմանում<br>- Զորային կառույցի բարեփոխումների ծրագրի մշակում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | 68.ՀՀ պաշտպանության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ներդրման գործընթացի իրականացում | - Քաղաքացիական հատուկ ծառայության ներդրման գործընթացի ապահովում |
| | 69.Ռադիոտեխնիկական համալիրների արդիականացում, զրահատեխնիկայի և հրթիռահրետանային համակարգերի պիտանիության ապահովում | - Զինված ուժերի համար միջազգային չափանիշներին համապատասխանող ռադիոտեխնիկական համալիրների ձեռքբերում<br>- ԶՈՒ-ի բազայի վրա գործող կազմակերպություններում ԶՈՒ-ի զրահատեխնիկայի և հրթիռահրետանային համակարգերի նորոգում |
| ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 70.Բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով | - Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ծրագրի իրականացում<br>- Հայաստանի Հանրապետությունում 1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ծրագրի իրականացում |
| | 71.Բնակարանային ապահովում՝ բնակարանային շինարարության իրականացման միջոցով | - Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բնակարանային շինարարության միջոցով ծրագրի իրականացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 72.Շինարարական ծախսային ծրագրերի ընդլայնման (այդ թվում` նորերի ընդգրկման) միջոցով` ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կրթական, օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման ծրագրեր | - ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կրթական օբյեկտների շինարարության (այդ թվում` հիմնանորոգման, վերակառուցման, արդիականացման) ընթացքի շարունակական բնույթի և ավարտի ապահովում |
| | 73.Շինարարական ծախսային ծրագրերի ընդլայնման (այդ թվում` նորերի ընդգրկման) միջոցով` ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային, առողջապահական, մարզական և այլ օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման ծրագրեր | - ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային, առողջապահական, մարզական և այլ օբյեկտների շինարարության (այդ թվում` հիմնանորոգման, վերակառուցման, արդիականացման) ընթացքի շարունակական բնույթի և ավարտի ապահովում |
| | 74.ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորում | - Քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգի մշակում<br>- ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացում, սահմանների ճշտում և լրացուցիչ օրենսդրական առաջարկությունների առաջադրում<br>- Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում առանձնացված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավոր-ման օբյեկտների կառուցապատման քաղաքաշինական կանոնադրությունների մշակում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 75.ՀՀ բնակավայրերի առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորում | - Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման հատուկ կարգի մշակում<br>- ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացում, սահմանների ճշտում<br>- Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների կառուցապատման քաղաքաշինական կանոնադրությունների մշակում |
| ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ | 76.Քաղծառայության զարգացման ռազմավարության մշակում | - ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի քաղաքացիական ծառայության համակարգի հզորացման բաղադրիչի համապատասխան ենթաբաղադրիչի կենսագործում |
| | 77.ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում մրցութային և ատեստավորման թեստերի և հարցատոմսերի հարցերի կատարելագործում | - ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի քաղաքացիական ծառայության համակարգի հզորացման բաղադրիչի համապատասխան ենթաբաղադրիչի կենսագործում |
| | 78.ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգերի մշակում | - ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի քաղաքացիական ծառայության համակարգի հզորացման բաղադրիչի համապատասխան ենթաբաղադրիչի կենսագործում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 79.ՀՀ քաղաքացիական ծառա-յության համակարգի մարմիննե-րում մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգերի շահագործմանն անհրաժեշտ տեխնիկական ապահովում | - ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի քաղաքացիական ծառայության համակարգի հզորացման բաղադրիչի համապատասխան ենթաբաղադրիչի կենսագործում |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 80.Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացում | - Կենսաթոշակների միջին չափերի շարունակական աճ՝ բազային և հիմնական կենսաթոշակների, ինչպես նաև ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացման միջոցով<br>- Կենսաթոշակային բարեփոխումների ընթացքն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում<br>- Անձնավորված հաշվառման համակարգի ներդրում և կիրարկում, տեղեկատվական համակարգի գործունեություն ապահովող միջոցառումների իրականացում, այդ թվում՝ տեխնիկական առաջադրանքի մշակում և ծրագրային փաթեթի մշակում (ձեռքբերում), փորձարկում և ներդրում<br>- Բարեփոխումների գործընթացում ներգրավված անձնակազմի վերապատրաստման (ուսուցման) կարիքների գնահատում, վերապատրաստման (ուսուցման) ծրագրի կազմում և իրականացում<br>- Բարեփոխումների գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինների կարիքների գնահատում, դրանց՝ համապատասխան տեխնիկական միջոցներով և գործիքներով (կապուղիներ, համակարգչային ծրագրեր և այլն) ապահովում<br>- Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների ստեղծում<br>- Հանրային իրազեկման աշխատանքային ծրագրի հաստատում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | | և իրականացում |
| | 81.Ժողովրդագրական ակտիվ քաղաքականության իրականացում, ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում և իրագործում | - Ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի հաստատում և իրականացում<br>- ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ստացման համակարգի ներդրում<br>- ժողովրդագրական զարգացման ընթացքի մոնիթորինգի միասնական համակարգի ստեղծում |
| | 82.Սոցիալական պաշտպանության ոլորտում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում | - Տեղեկատվական համակարգերի արդիականացում<br>ընտանեկան նպաստի ՏՀ<br>երեխաների ծննդյան և խնամքի նպաստի ՏՀ<br>կենսաթոշակային ՏՀ<br>աշխատանքի տեսչության ՏՀ և այլն<br>- Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրում նախարարության առանձնացված ստորաբաժանումներում<br>- Անձնակազմի կառավարման ՏՀ-ի ներդրում<br>- Տեղեկատվության փոխանակության ՏՀ-ի ներդրում<br>- Սոցիալական ոլորտի պորտալի մշակում<br>- Սոցիալական ոլորտի կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակության ինտերնետ համակարգի ներդրում<br>- Ոլորտում էլեկտրոնային թվային ստորագրության ներդրում:<br>- Ֆինանսատնտեսական կառավարման ՏՀ-ի ներդրում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 83.Երիտասարդների սոցիալական կայացման, ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ստեղծում | - Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թ. սեպտեմբերի 25-ի նիստի N 39 արձանագրության 21-րդ կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների ծրագրի և միջոցառումների իրականացում |
| | 84.Բռնցքամարտի ավագ տարիքի պատանիների աշխարհի առաջնություն | - 2009 թվականի օրացուցային պլանով նախատեսված ուսումնամարզական հավաքների անցկացում, միջազգային մրցաշարերին մասնակցությամբ միջազգային մրցակցային փորձի ձեռքբերում<br>- Առաջնությունը բարձր մակարդակով անցկացնելու համար կազմակերպչական աշխատանքների իրականացում |
| | 85.Ջյուդոյի երիտասարդների եվրոպայի առաջնություն | - 2009 թվականի օրացուցային պլանով նախատեսված ուսումնամարզական հավաքների անցկացում, միջազգային մրցաշարերին մասնակցությամբ միջազգային մրցակցային փորձի ձեռքբերում<br>- Առաջնությունը բարձր մակարդակով անցկացնելու համար կազմակերպչական աշխատանքների իրականացում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | 86.Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացում | - «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում.<br>- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման նախագծերի մշակում |
| ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 87.Երկաթուղային տրանսպորտի ոլորտը կարգավորող իրավական դաշտի ստեղծում | - «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքից բխող օրենսդրական ակտերի նախագծերի մշակում |
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 88.Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի պատրաստման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների (սարքավորումների) ձեռքբերում | - Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի տպագրության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և սարքավորումների, ինչպես նաև դրանց ներդրման և շահագործման համար անհրաժեշտ ծառայությունների (աշխատանքների) գնում |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 89.Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում | - Նախադպրոցական կրթության 2008-2015 թթ. ռազմավարության ներդրում. ՀՀ երկու մարզերի գյուղական և քաղաքային համայնքներում երեխաների համակազմի ընդլայնում, առնվազն 20%-ի մատչելիության ապահովում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 90.Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ | - 12-ամյա կրթության ուսումնական պլանի, առարկայական նոր ծրագրերի և չափորոշիչների մշակում, մեթոդական նյութերի պատրաստում և տպագրում<br>- Ուսուցիչների վերապատրաստում համաձայն նոր ծրագրերի<br>- Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ընդլայնում<br>- Անցում ամփոփիչ և ընթացիկ գնահատման նոր համակարգի<br>- Հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում |
| | 91.Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացում | - Նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում<br>- Մանկավարժական կադրերի վերապատրաստում |
| | 92.Բարձրագույն կրթության բարեփոխումները` ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների | - Մասնագիտական և ակադեմիական աստիճանների որակավորման համակարգի ներմուծում` համադրելիության ապահովման նպատակով<br>- Որակավորումների ազգային համակարգի ստեղծում |
| ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտե | 93.Գիտության ոլորտի բարեփոխումներ` հայեցակարգային, ռազմավարական և իրավական հիմքերի ապահովում | - Հայաստանի Հանրապետությունում երկաստիճան գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգի մշակում<br>- գիտության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում<br>- «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| ՀՀ կենտրոնական բանկ<br>ՀՀ կառավարությանն առընթեր<br>ՀՀ ոստիկանություն | 94.ՀՀ կենտրոնական բանկի ավտոապահովագրության ռեգիստրի և ՀՀ ճանապարհային ոստիկանության տեղեկատվական շտեմարանների սինխրոնացում | - ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ճանապարհային ոստիկանության շտեմարանների կառուցվածքային համադրում<br>- Շտեմարանների միջև տեղեկատվության փոխանակման նկատմամբ գերատեսչությունների պահանջարկի որոշարկում<br>- Սահմանված տվյալների փոխանակման տեխնիկական գործընթացների մշակում<br>- Սահմանված տվյալների փոխանակման և փոխադարձ հասանելիության ապահովում |
| Հայաստանի մրցունակության խորհուրդ<br>ՀՀ կենտրոնական բանկ<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ կառավարության աշխատակազմ | 95.«Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքից բխող միջոցառումների իրականացում | - Բանկի պոտենցիալ ներդրողների հետ աշխատանքներ<br>- Կանոնադրության ընդունում, բանկի գրանցում և լիցենզավորում<br>- Գլխավոր տնօրենի ընտրություն<br>- Բիզնես-պլանի մշակման համար փորձագետների ընտրություն<br>- Բիզնես-պլանի մշակում և հաստատում<br>- Աշխատակազմի ընտրություն<br>- Գործունեության հետ կապված ներքին կանոնակարգերի ընդունում |
| ՀՀ սփյուռքի նախարարություն | 96.Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի գործակցության հայեցակարգի մշակում և հաստատում | - Հայեցակարգի դրույթների սահմանում` ելնելով Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական և ՀՀ կառավարության գործունեության ծրագրի հիմնադրույթներից,<br>- Հայեցակարգի քննարկում շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների հետ, հայեցակարգի ընդունում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 97.Սփյուռքում գործող հայկական կազմակերպությունների, հասարակական և հոգևոր կառույցների հետ կայուն և գործընկերային կապերի ստեղծում | - «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակում<br>- Հայ համայնքներում առկա ներուժի հաշվառում բոլոր ոլորտներում և տվյալների միասնական բազայի ստեղծում<br>- Հայ համայնքների անձնագրավորում<br>- Սփյուռքի մասին համապարփակ շտեմարանի ստեղծում |
| | 98.Հայաստան-սփյուռք գործակցության զարգացում և այդ գործակցության իրավական հիմքերի կատարելագործում | - Հայրենիք-սփյուռք գործակցության մասնագիտական հանձնախմբերի ձևավորում<br>- Հայաստանի ներքին խնդիրների լուծման համար սփյուռքի ներուժի օգտագործման կայուն և արդյունավետ մեխանիզմների մշակում<br>- Հայապահպանական ծրագրերի մշակում և իրականացում<br>- Հայրենադարձության մասին օրենքի նախագծի և այն խթանող ծրագրի մշակում<br>- Սփյուռքի համար կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացների խթանում և աջակցում<br>- Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման իրավական հիմքերի կատարելագործման ուղղությամբ ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակում |
| | 99.Հայրենադարձության ծրագրի մշակում | - Հայրենադարձության խնդիրներին նվիրված գիտաժողովի կազմակերպում, ծրագրի դրույթների և իրականացման գործիքների սահմանում<br>- Ծրագրի քննարկում շահագրգիռ կազմակերպությունների հետ և ծրագրի ընդունում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | 100.Սփյուռքահայ համայնքներում գործող հայկական դպրոցների աջակցության ծրագրերի մշակում | - Սփյուռքի հայկական դպրոցների խնդիրների մասին տեղեկատվության հավաքում և ամփոփում<br>- Ծրագրի դրույթների և իրականացման մեխանիզմների ձևակերպում<br>- Ծրագրի քննարկում Սփյուռքի և Հայաստանի Հանրապետության շահագրգիռ կազմակերպությունների հետ և ծրագրի ընդունում |
| Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն | 101.Տարածքային զարգացման անհամամասնությունների մեղմում | 1) մարզերի համար մարզային զարգացման ծրագրերի մշակման նպատակով՝<br>ա. իրազեկման աշխատանքների իրականացում<br>բ. դրամաշնորհային միջոցների հայթայթում մարզային զարգացման ծրագրերի կազմման տեխնիկական օժանդակության, ինչպես նաև փորձագետների ներգրավման նպատակով<br>2) ՀՀ կառավարության արտագնա նիստերի կազմակերպում՝ եռամսյակը մեկ անգամ |
| | 102.Տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացում | 1) Իրավական և մասնագիտական հսկողության ամբողջական իրականացում<br>2) Հսկողության արդյունքների վերլուծություն և իրավական հետևանքների ապահովում<br>3) ՀՀ տարածքային կառավարման նախարարության, որպես իրավական հսկողության բարձրագույն մարմնի, գործառույթների իրականացում |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| | 103.Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների արդյունավետ աշխատանքի ապահովում | 1) Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի ուսումնասիրում, վերահսկողության իրականացում (շարունակական)<br>2) Համայնքային ենթակայության սոցիալական ծառայության տարածքային մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում, նրանց կողմից համայնքային սոցիալական ծրագրերի իրականացման պրակտիկայի ուսումնասիրում |
| | 104.Օրենքով խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորությունների պատշաճ կատարման ապահովում | 1) Ոլորտը կանոնակարգող օրենսդրության ուսումնասիրություն և վերլուծություն, դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացում<br>2) Ոլորտում գործող մարմինների աշխատանքի մոնիթորինգ, ձևավորված պրակտիկայի ամփոփում |
| | 105.Հարավային Կովկասում «Եվրառեգիոն» համագործակցության մոդելի կիրառում | Հայաստանի և Վրաստանի սահմանի երկայնքն ընդգրկող, Եվրառեգիոնի գաղափարախոսությանը համապատասխան կառույցների հիմնադրում, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի տեղական իշխանությունների, ինչպես նաև Վրաստանի 4 տարածքային համայնքների մասնակցությամբ |
| | 106.Տարածաշրջանային կայու-նության և անվտանգության ապահովման, սահմանամերձ համագործակցության զարգացման գործում Հայաստան-ԵՄ համագործակ-ցության շրջանակներում տարածաշրջանային վիճակագրական համակարգի ստեղծմանն օժանդակում և նպատակային ծրագրերի իրականացում | ԵՄ-ում կիրառվող՝ Վիճակագրության համար տարածքային միավորների անվանացանկի (NUTS) չափանիշների ներդրման համար առաջարկությունների մշակում: Եվրոպական նախաձեռնության շրջանակներում ստեղծված Սև ծովի Եվրառեգիոնի համագործակցության շրջանակներում Հայաստանի տեղական իշխանություններին հնարավորության ընձեռում՝ ուղղակիորեն միջոցներ ներգրավելով Եվրամիության կառուցվածքային ֆոնդերից |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 107.ՀՀ մարզերի և համայնքների՝ այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովում (շարունակական) | ՀՀ մարզերի և համայնքների՝ այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության համաձայնագրերի կնքում |
| | 108.Ֆինանսական ապակենտրոնացում՝ ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրում<br><br>Համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավա-քագրման մեխանիզմների կատարելագործում, տեղական նոր հարկատեսակների ներմու-ծում: | «Ֆինանսական համահարթեցման մասին » ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո ներդրումն ապահովող միջոցառումներ<br>- Օրենքով սահմանված համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրման մեխանիզմների հստակեցում և կազմակերպում<br>- Համայնքային ծառայողների և համայնքների ղեկավարների համար բացատրական աշխատանքների կատարում:<br><br>- Հայաստանի Հանրապետությունում տեղական հարկերի հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում<br>- Տեղական հարկերի մասին օրենսդրության ձևավորումից հետո նոր տեղական հարկերի ներմուծում, «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և 2009 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն ներկայացնելը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 109.Վարչատարածքային բարեփոխումների իրականացում | * Համայնքների միավորման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների իրականացում Կատարվող քայլերը՝<br>- «Համայնքների միավորման կամ բաժանման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>- Տեղական հանրաքվեի նշանակում ՀՀ կառավարության կողմից, հանրաքվեի արդյունքների ամփոփում<br>- «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների իրականացում<br>- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների իրականացում<br>Համայնքների միավորման կապակցությամբ միավորված համայնքների ավագանիների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում<br>- Նոր միավորված համայնքի ավագանու ընտրությունների անցկացում<br>Համայնքների միավորման կապակցությամբ միավորված համայնքների ղեկավարների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում ՀՀ կառավարության կողմից<br>- Նոր միավորված համայնքի ղեկավարի վաղաժամկետ ընտրությունների նշանակում<br>* Վերակազմակերպվող (միավորված) համայնքների իրավունքների և պարտականությունների փոխանցում իրավահաջորդության ապահովում<br>* Համայնքների վարչական սահմանների որոշում, քարտեզագրում, համապատասխան փոփոխություններ քարտեզներում և իրավական ակտերում<br>*Համապատասխան կադրերի կրճատում, համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն<br>* Միացվող համայնքների խրախուսման մեխանիզմների մշակում և հրապարակում<br>* Պետական և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի ընտրության պարագայում խոշորացվող կամ միջհամայնքային միավորումներում ընդգրկվող համայնքներին, առաջնահերթության տրամադրում<br>* Միացվող համայնքներում բացատրական աշխատանքների կատարում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 110.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության մակարդակի բարձրացում, ավագանու ինստիտուտի կատարելագործում | -Համայնքներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված «ավագանու օրինակելի կանոնակարգի» ներդրման գործընթացի շարունակում<br>- «Ավագանու օրինակելի կանոնակարգի» ներդրման ուղղությամբ նախարարության և մարզպետարանների կողմից վերահսկողության ուժեղացում, ինչպես նաև ներդրման արդյունքների մոնիթորինգի իրականացում<br>- Բացատրական և մասնագիտական քննարկումների կազմակերպում ՀՀ համայնքներում |
| | 111.ԵՄ-ի համագործակցության շարունակականության ապահովում և մակարդակի բարձրացում | - ԵՄ-ի կողմից 2008 թ. մայիսի 29-ին հրապարակած «Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույցի» ծանոթագրություններով նախատեսված միջոցառումների (տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում) իրականացում |
| | 112.Համայնքային ծառայության համակարգի կայացման ապահովում | - Համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման գործընթացի ավարտական փուլ<br>- Վերապատրաստման գործընթացի նկատմամբ դիտարկումների իրականացում, հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում<br>- Վերապատրաստումն անցած համայնքային ծառայողների ատեստավորումների և համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացում<br>-Համայնքային ծառայության կադրերի միասնական ռեզերվի ստեղծում և վարում<br>-Համայնքային ծառայողների գրանցամատյանի ստեղծում և վարում<br>-Համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության իրականացում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 113.Կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների, մասնավորապես, էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդնում<br>- Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդնում ՀՀ համայնքներում | - Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) տեղադրում ՀՀ 217 համայնքներում (12 քաղային, 48 քաղաքային և 157 գյուղական)<br>- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) 52 տարածքային բաժիններում տեղեկատվական ավտոմատացված համակարգի տեղադրում և այդ համակարգի ու ՀԿՏՀ-ի փոխգործակցության ապահովում |
| | - ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնում ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում | - էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի ներդրում ՀՀ մարզպետարաններում, ծրագրերի և փաստաթղթերի կազմում, համակարգողների և օգտվողների ուսուցում, խորհրդատվություն շահագործման ընթացքում,<br>- Ինտերնետ կապով ապահովված ՀՀ համայնքների թվի մեծացում<br>- Ինտերնետ կապով ապահովված ՀՀ համայնքների կայքերում ավագանիների որոշումների տեղադրման գործընթացի վերահսկողություն |
| | - Համայնքների համար տվյալների միասնական բանկի ստեղծում | - Գույքահարկի և հողի հարկի տվյալների հավաքական և մարզպետարանների էլեկտրոնային շտեմարանների սպասարկման ծրագրային ապահովման ներդրում՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում և մարզպետարաններում<br><br>- էլեկտրոնային շտեմարաններն սպասարկող աշխատողների ուսուցում և վերապատրաստում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 114.ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում ներքին աուդիտի իրականացման գործընթացի արդյունքների (գործընթացների նկարագրություն, նրանցում պարունակվող ռիսկերի գնահատում) ներդնում | - Համակարգի ներդրման իրավական գործընթացի կազմակերպում<br>- ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատողների կատարողականության գնահատում<br>- ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում իրականացվող գործառույթների նկարագրման և դրանց մեջ պարունակվող ռիսկերի գնահատման մոնիթորինգ, վերջինիս արդյունքով նախարարության կառուցվածքի և գործառույթների մասով փոփոխությունների, առաջարկությունների ներկայացում<br><br>- ՀՀ մարզպետարաններում ներքին աուդիտի իրականացման գործընթացի ներդրման նախապատրաստում |
| | 115.Ըստ մարզերի ֆինանսական միջոցների բաշխման անհամաչափությունները բնութագրող ցուցանիշների մշակում | - Ցուցանիշների մշակման գործընթացում նախարարու-թյուններին մեթոդական աջակցության ցուցաբերում, ձևաչափի մշակում<br>- Համապատասխան մարմինների հետ ընդունված ձևաչափով 2010 թ. ՀՀ պետական բյուջեի նախագծի մշակում և ՀՀ կառավարության ներկայացում |
| | 116.Համայնքների վերաբերյալ ստեղծված տեղեկատվական բազայի (անձնագրերի) թարմացում | - ՄԱԶԾ-ի օժանդակությամբ իրականացված «Համայնքային տիպաբանություն» ծրագրի տեղեկատվական բազայի օգտագործելի, պարզ տարբերակի մշակում և դրա շարունակական ակտուալացման ապահովում<br>- Եռամսյա կտրվածքով գործադիր իշխանության հանրապե-տական և տարածքային կառավարման մարմիններից համապատասխան տեղեկատվության հավաքագրում, տեղեկատվության ամփոփում և բազայի թարմացում<br>- Նշված բազաների հրապարակայնության և մատչելիության ապահովում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| | 117.Ըստ համայնքների ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսված կապիտալ ներդրումների և համայնքների բյուջեների կատարողականների հարաբերում | - ՀՀ պետական բյուջեի նախագծով` ըստ համայնքների իրականացվելիք կապիտալ ծախսերի վերլուծում և հարաբերում համայնքի բյուջեի հավաքագրման մակարդակի հետ<br>- Պետական բյուջեի նախագծով համայնքներում նախատեսված կապիտալ ներդրումների փոխկապակցում համայնքների բյուջեների կատարողականների հետ և այդ գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում |
| | 118.ՀՀ պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի հաշվառման և հետագա արխիվացման ու պահպանման համակարգի ստեղծման նախապատրաստում | Միջազգային փորձի ուսումնասիրում, ՀՀ կառավարության 2005 թ. օգոստոսի 4-ի «ՀՀ պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանելու մասին» N 1595-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի պատրաստում` 2010 թ. ընդունելու համար |
| | 119.Հայաստանի Հանրապետության քաղաքացիների` Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի ընթացքում ծագող հարաբերությունների օրենսդրական կարգավորում | Համապատասխան օրենքի մշակում, ընդունում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ